«Երկնագույն վառելիքը» պահանջում է զգուշություն

Ինչի՞ մասին է երազում սպառողը: Ունենալ անընդհատ եւ անխափան գազամատակարարում: Այդ մասին հոգ է տարել «ՀայՌուսգազարդ» ՓԲ ընկերությունը. մնում է լինել կարգապահ եւ պատասխանատու բաժանորդ, ճիշտ օգտվել կենցաղային գազի սարքերից եւ սարքավորումներից:

Մարդիկ պետք է իմանան եւ չմոռանան կենցաղում գազից օգտվելու կանոնները: Տեղադրել գազային սարքերը բնակարանում՝ դա դեռ ամենը չէ. ոչ ոք ապահովագրված չէ վթարային իրավիճակներից: Սպառողը պետք է իմանա, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկել ապահովելու համար իր անվտանգությունը վթարային իրավիճակներում՝ բացառելու համար անցանկալի հետեւանքները:

Անվտանգության տեխնիկա

Գազից օգտվելիս ինչպե՞ս խուսափել խախտումներից: Գազասպառման համակարգերի անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է մշտապես լինել ուշադիր եւ խստագույնս հետեւել «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» Տեխնիկական կանոնակարգին: Հատկապես դա կարեւոր է ձմռանը, երբ գազի ջեռուցման սարքերի զանգվածային միացման ժամանակ կտրուկ ավելանում է գազի սպառումը, եւ դրա հետ մեկտեղ աճում է վթարների, դժբախտ պատահարների, վնասվածքների, նյութական կորուստների եւ նույնիսկ մարդկային զոհերի հավանականությունը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն եւ «էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ն զգուշացնում են.

• Մի թողեք առանց ուշադրության աշխատող գազօջախները, մի օգտագործեք դրանք սենքերի տաքացման համար: Բացեք օդանցքը (վերնափեղկը) գազօջախից օգտվելուց առաջ: Գազասարքեր ձեռք բերելիս նախապատվությունը տալ գազի հոսքի անջատման ավտոմատ սարքավորումներով հագեցած գազասարքերին: Գազի արտահոսքի հայտնաբերման դեպքում եւ վթարային իրավիճակներում անհապաղ հայտնեք գազի վթարային ծառայություն՝ զանգահարելով 104 հեռախոսահամարով:

• Զգույշ եղեք բնական գազն օգտագործելիս: Բնակարանում գազի հոտի առկայության դեպքում անհապաղ հայտնեք գազի վթարային ծառայություն՝ զանգահարելով 104 հեռախոսահամարով: Պարտադիր փակեք գազասարքերի բոլոր փականները, բացեք պատուհաններն ու դռները, օդափոխեք տարածքը, կրակ մի՛ վառեք, մի՛ միացրեք եւ մի՛ անջատեք էլեկտրականությունը եւ էլեկտրական սարքավորումները, տարհանեք բնակարանում գտնվող մարդկանց, սպասեք մինչ վթարային ծառայության ժամանումը:

• Պարբերաբար ստուգեք քարշի առկայությունը ծխաօդատար ուղիներում: Մի՛ փակեք օդատար ուղիների ճաղավանդակները պաստառներով: Եթե կասկածում եք գազօջախի, ջրատաքացուցիչի, ջեռուցման կաթսայի անսարքությանը, ապա անհրաժեշտ է անհապաղ փակել սարքի փականը եւ կանչել մասնագետին: Գազասարքեր գնելիս պահանջեք լիազորված մարմնի կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատ:

• Գազաֆիկացված առանձնատներում ջեռուցման վառարաններն առավել վտանգի աղբյուր հանդիսացող օբյեկտներ են: Չի՛ կարելի օգտվել վառարանից, եթե.

- չի ստուգվել ծխնելույզի եւ օդատար ուղիների վիճակը,
- բացակայում է քարշը կամ քարշը հետադարձ է,
- անսարք է անվտանգության ավտոմատ համակարգը,
- վնասված է վառարանի շարվածքի կամ այրիչի դիմային թիթեղի հերմետիկությունը,
- գազը վառվում է մրոտող բոցով կամ անկայուն է:

• Լավ քարշի եւ սարքին վառարանի դեպքում միայն կարելի է վառել: Միայն վառվող վառիչի դեպքում բացեք հիմնական այրիչի փականը եւ վառեք այն: Եթե այրիչը հանգել է, ապա փակեք իջուցիկ խողովակի փականը, կրկին օդափոխեք այրման խուցը եւ կրկնեք բոլոր գործողությունները հիմնական այրիչը վառելու համար: Այրիչի միացումից 3-5 րոպե անց կրկնակի անգամ ստուգեք քարշի առկայությունը:

• Մի կատարեք տան ինքնակամ գազաֆիկացումը, գազի սարքավորումների տեղափոխում, փոխարինում եւ վերանորոգում, ինչպես նաեւ սենքերի վերափոխում, որտեղ տեղադրված են գազի սարքավորումները: Թույլ մի տվեք գազի սարքավորումների վերանորոգում իրականացնել համապատասխան փաստաթուղթ չունեցող անձանց: Ձեր անվտանգությունը կախված է Ձեզանից:

• Թույլ մի տվեք նախադպրոցական տարիքի երեխաներին, ինչպես նաեւ իր գործողությունները չկառավարող եւ այդ սարքերից օգտվելու կանոնները չիմացող անձանց օգտվել գազասարքերից: Արգելվում է արտահոսքի հայտնաբերումն իրականացնել կրակի օգնությամբ:

• Գազասարքերի ժամանակին տեխնիկական սպասարկում իրականացնելը դրանց անվտանգ աշխատանքի երաշխիքն է:

• Դժբախտ պատահարներից խուսափելու համար անհրաժեշտ է խստագույնս պահպանել անվտանգության տեխնիկան եւ կատարել բնական գազից օգտվելու բոլոր պահանջները: Կոչ ենք անում բոլոր բաժանորդներին՝ լինել պատասխանատու եւ պահպանել անվտանգության կանոնները: Միայն հետեւելով այս խորհուրդներին կարող եք ապահովել ձեր անվտանգությունը:

Ձեր անվտանգությունը կախված է Ձեզանից:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի եւ «էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի Հասարակայնության հետ կապերի ծառայություններ